



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Առարկան՝ քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Հովակիմյան

Ուսումնական հաստատություն՝ Արտաշատի Հովհ.Թումանյանի
անվ.№2 հ/դ ՊՈԱԿ

Երևան 2022

ԹԵՄԱ՝

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3-

4

Գլուխ 1. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնույթը և վերլուծությունը տեսական մասնագիտական գրականության շրջանակներում

1.1 Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների տեսակները, առաջացման պատճառները, դրսևորման ձևերն ու հարաբերությունների հետագա դինամիկան.....5-9

1.2 Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման մեխանիզմները և վարքային յուրատիպ մոդելները որպես հարաբերությունների պահպանման միջոց.....9-12

Գլուխ 2. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները և հաղթահարման ուղիները թեմայի հետազոտական վերլուծություն

2.1 Հետազոտության մեթոդները, կազմակերպումը, և նկարագրությունը.....13-14

Եզրակացություն.....1

5

Գրականության

ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը որպես սոցիալական յուրատիպկառույց իր զարգացման առանձնահատկություններով և պատմական կերպովմշտապես գտնվել և գտնվում է հոգեբանների, հասարակագետների, պատմաբանների և ոլորտի այլ պատասխանատուների ուշադրության կենտրոնում: Ընտանիքիգիտական և մասնավորապես հոգեբանական դիտապատկերի վերահսկումն ազգային, հասարակական և պետական նշանակության ամենաարդիականհարցերից է:Յուրատիպ վերլուծության և բազմագործոն դիտարկման է ենթարկվել և մինչևօրս ենթարկվում է ամուսնաընտանեկան կոնֆլիկտների և վերջիններիս հաղթահարման մեխանիզմների վերաբերյալ հետազոտությունները, որոնց վերաբերյալքննարկումները մշտապես գտնվում են հատկապես հոգեբանների ուշադրությանկենտրոնում: Այս առումով մեր հետազոտությունն առանձնակի արդիականէ համարվում երկու հիմնական հանգամանքներով պայմանավորված.

ա) Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները ունեն արտահայտված սոցիալական և հոգեբանական բնույթ և, այս իմաստով առանձնակի ենքարժևորում ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառների և հաղթահարման հնարավորմեխանիզմների ուսումնասիրմանառավել համընդգրկուն ուսումնասիրությունները:

բ) Ամուսնաընտանեկան փոխհարաբերություններում առկա կոնֆլիկտների հետազոտումը և հաղթահարման մեխանիզմների առաջացումը հնարավորություն է ընձեռում առաջադրել այն ճանապարհներն ու լուծման հնարավոր մեխանիզմները,որոնք կնպաստեն հարաբերությունների պահպանմանըև հետագադինամիկ զարգացմանը: Մեր հետազոտության համար առանցքային է համարվում այն վարքային-ստրատեգիական մոդելների վերլուծությունը և մշակումը, որը հնարավորությունէ ընձեռում առավել արդիական լուծումներ գտնել հարաբերությունների հետագա դինամիկ զարգացման համար:հետազոտման նպատակն էվերլուծելամուսնաընտանեկան

կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման յուրատիպ մեխանիզմները: Չետագոտության օբյեկտ են կոնֆլիկտային համարվող ընտանիքների միջանձնային կոնֆլիկտային փոխհարաբերությունները, հաղթահարման վարքային մոդելները և մեխանիզմները: Չետագոտության առարկա են մոլորակային ընտանեկան փոխհարաբերություններում առաջացող կոնֆլիկտները: Չետագոտության տեսական նշանակությունն այն է, որ տեսական-մասնագիտական գրականության շրջանակներում ուսումնասիրվում են ընտանիքի կերպը և մոլորակային ընտանեկան փոխհարաբերություններում առաջացող կոնֆլիկտները, այնուղիները, որոնք նպաստում են կոնֆլիկտների հաղթահարմանը: Այս հիմնախնդիրը արծարծվել է այնպիսի հեղինակների աշխատություններում, ինչպիսիք են՝ Վ.Ա.Սիսենկոն, Յու.Այոշիևան, Վ.Պ.Մենիևուտինը, Չ.Ցելինիբը, Օ.Ն.Գրոմովան, Դ.Ենիկեևան, Ս.Կռատոխվիլը, Ի.Դ.Մարինովսկայան, Ն.Ն.Օբոզովը, Ա.Ն.Օբոզովան, Վ.Պոնոմարենկոն, Ա.Ռոզենֆիլդը, Ա.Գ.Խառչևը, Մ.Չեկադինը, Վ.Ս.Ցելյուկոն և այլոք: Հայ հեղինակներից այս հիմնախնդիրն անդրադարձել են՝ Չ.Ստեփանյանը, Ս.Սեդրակյանը, Ա.Նալչաջյանը, Ս.Հարությունյանը, և այլոք:

Չետագոտությունը կատարվել է համակարգված մի շարք մեթոդների՝ հիմնախնդիրն վերաբերող տեսական վերլուծության և Կ.Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդիկան:

ԳԼՈՒԽ 1. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնույթը և վերլուծությունը տեսական մասնագիտական գրականության շրջանակներում

1.1 Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների տեսակները՝ «բաց» և «փակ» կոնֆլիկտներ, առաջացման պատճառները, դրսևորման ձևերը և հարաբերությունների հետագա դինամիկան

Ընտանեկան կոնֆլիկտները բազմազան են: Սրանք կոնֆլիկտներ են ամուսինների, ծնողների, երեխաների միջև, ինչպես նաև տարածայնությունների տասարդ և ավագ սերունդների ներկայացուցիչների միջև: Կոնֆլիկտն առաջանում է ամուսինների համար ինչ-որ բարդ խնդրի պատճառով:

Կոնֆլիկտի ամենանշանակալի դերը ընտանիքի ձևավորման ընթացքում է, երբ ամուսինները նոր են սկսում հարմարվել միմյանց: Այս փուլում է, որ կարևոր է որոշել կոնֆլիկտային իրավիճակների լուծման ուղիները և միջոցները: Կոնֆլիկտի կողմերից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնում տարածայնությունների գոտում ստեղծված իրավիճակը և դրան նպաստող հանգամանքները: Կողմերից յուրաքանչյուրը յուրովի է գնահատում կոնֆլիկտի բնույթը, որն էլ կոնֆլիկտի առաջացման պատճառ է դառնում: Կոնֆլիկտների հոգեբանական հետազոտությունները նպատակ ունեն պարզաբանելու այն հոգեբանական օրինաչափությունները, որոնք ընկած են կոնֆլիկտների առաջացման և զարգացման հիմքում: Առավել չափով կարևորվում են այնպիսի բովանդակություններ, ինչպիսիք են՝ շարժառիթները, դրդապատճառները, հետաքրքրությունները, նպատակները, հուզական հակազդեցությունները, իմացական կոնստրուկտները և այլն: Կոնֆլիկտի գործառույթները կապված են հակասության վրա ազդեցության, կոնֆլիկտի առաջացման պատճառներ, տրամադրությունների, փոխհարաբերությունների, հակառակորդների անհատական գործունեության արդյունավետության, խմբի համատեղ գործունեության արդյունավետության և դրա շրջանակներում փոխհարաբերությունների, արտաքին միկրո և մակրոմիջավայրերի հետ: [4, էջ 12]

Յոգեբանության մեջ ամուսնաընտանեկան կոնֆլիկտ եզրույթի տակ հասկանում են երկու կամ ավելի անձանց փոխադարձ բացասական հոգեկան վիճակը, որը բնութագրվում է թշնամանքով, հարաբերություններում նեգատիվիզմով, ինչը պայմանավորված է իրենց հայացքների, հետաքրքրությունների կամ կարիքների անհամատեղելիությամբ:

Յոգեբան Ա.Վ. Դմիտրիևը կոնֆլիկտը ներկայացնում է որպես զարգացող գործընթաց, որը բաղկացած է չորս փուլից՝

1. Առաջին փուլը կոնֆլիկտի սկիզբն է: Ստեղծվում է միջադեպ, առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ: Յարաբերությունների լարվածությունը տեղի է ունենում ինչպես օբյեկտիվ պատճառներով, այնպես էլ չափից շատ հույզերից, անհարգալից վերաբերմունքից, մտքերի ոչ ճիշտ արտահայտելուց, սխալ եզրակացություններից:

2. Երկրորդ փուլը կոնֆլիկտի վերելքն է: Յարաբերությունները սրվում են, և հակասությունների կուտակումից միջադեպը վերածվում է կոնֆլիկտի:

3. Երրորդ փուլը կոնֆլիկտի գագաթնակետն է: Դիտվում է կոնֆլիկտի էսկալացիա սրումը, կողմերի ընդդիմության ակտիվացում, հարաբերությունների ճգնաժամ:

4. Չորրորդ փուլը կոնֆլիկտի անկումն է: Կոնֆլիկտը մարում է հարաբերությունները կամ հարթվում են, կամ տեղի է ունենում դրանց վերջնական խզում: Կոնֆլիկտի ռացիոնալ ավարտման համար կարևոր է վերացնել նրա իրական պատճառը և թույլ չտալ, որպեսզի կոնֆլիկտը ձգձգվի: Յակառակ դեպքում դա ավելի է սրվում, և հետևանքները բերում են ոչ միայն բարոյական վնասի հոգեբանական անհարմարության՝ ապատիայի, վատ տրամադրության և ինքնազգացողության տեսքով, այլև նյութական վնասի, քանի որ նվազում է աշխատունակությունը: [6, էջ 320]

1. Ֆիզիոլոգիական կոնֆլիկտ- Չուզընկերները բոլորովին տարբեր են և այս ֆունկցիոնալ անպայման առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ: Այս տեսակի կոնֆլիկտները պետք է վերացնել դեռ սաղմնային վիճակում, ընտանեկան կյանքի հենց սկզբում, հասկանալ միմյանց առանձնահատկությունները և ուղիղ կերպով խոսել դրանց մասին: Դա ճիշտ այն դեպքն է, երբ կարելի է անել միակ եղանակով՝ սեփական կենսագործունեությունը կազմակերպել այնպես, որ դրանում մամուլի ներքին ոչ ոք իրեն ընկճված չզգա և ստիպված չլինի հարմարվել

մյուսիցանկուղյություններին և կարիքներին: Բայց եթե թյուրըմբռնումից խուսափելն անհնար է, պետք է գիտակցել, որ այս տիպի կոնֆլիկտը չի կարող ընտանիքի փլուզման հիմք հանդիսանալ, և դրանից դուրս գալու լավագույն ելքը փոխզիջումն է:

2. Հոգեւեռական կոնֆլիկտը զուգընկերների կյանքում հասունանում է այն ժամանակ, երբ նրանց կյանքից վերանում է էյֆորիան, ինչը զույգին տալիս է սիրահարվածության զգացում: Եվ զուգընկերոջից աճող դժգոհության զգացումը լավ հիմք է այս տեսակի բախումները կանխելու համար: Այս տիպի կոնֆլիկտները կանխելումիջոցն է լինել այնպիսին, ինչպիսին որկար ամասակզբից զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունները:

3. Կարգավիճակադերային-Հենց սրա առաջացման հետ է կապված ամուսնական զույգերի շրջանում տպավորիչ թվով ամուսնալուծությունների քանակը: Եթեզույգում կողակիցներից մեկը ցուցադրաբար չի հարգում մյուսին և ամեն կերպնսեմացնում է նրա դերը, կարգավիճակադերային կոնֆլիկտն ակնհայտ է: Այն հայտնվում է մեզայնաններում (առավել հայտնի որպես անհավասար ամուսնություն),իսկ զուգընկերների անհավասարությունը սոցիալակա բնույթ է կրում:

4. Հուզական կոնֆլիկտի մեջ հիմնական խնդիրը ամուսիններից մեկի կողմիցսիրո ակնհայտ դրսևորումների բացակայությունն է: Նման դրվածքը սովորաբարհաստատվում է զույգերի մեջ, երբ զուգընկերներից մեկը փակ և ոչ շատ հուզական անձնավորություն է, ուստի նա չի կարող յուրաքանչյուր հինգ րոպեմեկ կրկնել իր ոչ երկնային սիրո մասին: Եվ եթե այդ կեսն այնքան էլ վստահչէ սեփական անձի և ամուսնու զգացմունքների վրա, ապա հուզական կոնֆլիկտը երկար սպասել չի տա: Ջերմ վերաբրմունք սիրելիի նկատմամբ չցուցաբերելու դեպքում վաղ թե ուշ կասկածի տակ է դնում զուգընկերոջ կողմից որևէզգացմունքների առկայությունը:

5. Տարիքային-Հոգեբաններն անվանում են ոչ թե սերունդների միջև հավերժվիճաբանությունները,այլ թյուրըմբռնումը, որն առաջանում է այն մարդկանցմիջև, որոնց հասունությունը բոլորովին տարբեր մակարդակներում է: Այս տեսակիկոնֆլիկտները չափազանց հեշտ են սրվում. բավարար է պարզապես չնկատելզուգընկերոջը և ցույց տալ, որ միջոցառումներին համատեղ մասնակցություննանհնար է: Նմանօրինակ հարաբերություններ արժե պահպանել միայն այն դեպքում,եթե ամուսիններից յուրաքանչյուրը վստահ է, որ իր կողքին

այն «միակն ուանկրկնելին» է: Հատկանշական է, որ հոգեբաններն ասում են, որ տարիքային կոնֆլիկտները շատ դժվար է լուծել:

6. Արժեհամակարգային կոնֆլիկտ-Եթե երկու մարդու կյանքի առաջնահերթությունները չափազանց տարբեր են և նրանք չեն գտնում շփման եզրեր, ապաայն փաստը, որ նրանք ամուսնական կապի մեջ են, այլ կերպ, քան պատահականություն չի կարելի անվանել: Այնուամենայնիվ, փորձագետները վստահ են, որկոնֆլիկտի այս տեսակը հնարավոր է հաղթահարել, եթե այն լուծելու համարբավարար ջանքեր գործադրվեն: Նույնիսկ եթե ամուսիններից մեկը ցուցաբերումէ հակահասարակական վարք, կախվածություն ունի ալկոհոլից կամ թմրանյութերից, կարելի է փորձել դուրս գալ սովորական սոցիալական շրջանակից և դիմելիամապատասխան մասնագետների: Ճիշտ է, արժեհամակարգային հակասությանայս տեսակն, այնուամենայնիվ, ծայրահեղություն է: Մնացած բոլոր դեպքերում, խնդիրների հասունացման սկզբնական փուլում, պետք է փորձել չճնշել զուգընկերոջն իր արժեքային հարթությունում, այդ դեպքում կոնֆլիկտի չհասնելու հնարավորությունը շատ մեծ է:

7. Նյութական կոնֆլիկտ-Երբ հասարակությունն այդքան լարված է և տարված է նյութական բարիքներով, ընտանիքի նավակը, ֆինանսական վիճակի ցանկացած անհավասարակշռության դեպքում, շրջվել և խորտակվել է:Եվ այստեղ իրադարձությունների զարգացման երկու տարբերակ կարող է լինել: Առաջինը ընտանիքում փողի բացարձակ բացակայությունն է, որը հանգեցնում է միմյանց անվերջնախատինքների՝ գումար վաստակելու կամ ծախսելու անկարողության համար:Եվ երկրորդը՝ ընտանեկան բյուջեի հանկարծակի էական ավելացում, և նման փոփոխությունների հասած ամուսինը որոշում է գտնել իր համար առավել հարմարզուգընկեր: Իրադարձությունների նման զարգացումից հնարավոր է խուսափել միայն այն դեպքում, երբ կողակիցները երկեուսն էլ նշանակալի դիրք են զբաղեցնումբոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են գումար վաստակելուն և ծախսելուն:Եվ եթե հնարավոր է ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ ընտանիքի բյուջեն հավասարապես պատկանի երկու ամուսիններին, ապա նյութական կոնֆլիկտն ընտանիքը կազմալուծելու շանսեր չի ունենա:[3,էջ44-48]

Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները լինում են՝ բաց և փակ. Բաց կոնֆլիկտները վիճաբանության, սկանդալի, ծեծկռտուքի և այլ տեսք են

ստանում: Բաց կոնֆլիկտի ժամանակ կողմերի թե վարքը և թե նպատակները անհամատեղելի են: Ընդհանրապես փակ կոնֆլիկտային փուլից բացին անցնելու հիմնական հայտանիշը կոնֆլիկտային վարքագիծն է: Դա նշանակում է արտաքուստ դրսևորվող գործողություն, որն ուղղված է հակառակորդի նպատակներիիրականացմանը խոչընդոտելուն և սեփական նպատակները իրականացնելուն: Փակ կոնֆլիկտները արտաքուստ վառ արտահայտվածությունն չեն ունենում, դաներքին դժգոհությունն է, սակայն նմանօրինակ կոնֆլիկտների ազդեցությունը ամուսնական հարաբերությունների վրա պակաս նկատելի չէ, քան բաց կոնֆլիկտներինը: Փակ կոնֆլիկտների փուլում ի հայտ են գալիս կոնֆլիկտի կառուցվածքի պատճառների բաղկացուցիչ տարրերը, այսինքն՝ ակնառու է կոնֆլիկտային գործողությունների նախադրյալների հիմքը, իրավիճակի կոնֆլիկտային բնույթի միակողմանի կամ երկուստեք գիտակցումը: Ըստ ուղղվածության առանձնացնում են կառուցողական (կոնստրուկտիվ) և կործանարար (դեստրուկտիվ) կոնֆլիկտներ՝ ա/ կործանարար – ընտանեկան հարաբերությունների այս միջոցները ներառում են վիրավորանքներ, մարդկային արժանապատվության նվաստացում, ավելի շատ վիրավորելու, հակամարտության մեջ միմյանց մեղադրելու ցանկություն: Արդյունքում վերանում է փոխադարձ հարգանքը, և ամուսնական փոխհարաբերությունները վերածվում են տհաճ պարտականության և բ/ կառուցողական – կոնֆլիկտը կառուցողական դեր է կատարում, ամուսինները ձգտում են ընտրել այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն պարզել կոնֆլիկտի պատճառները, դրանք հիմնականում փնտրում են սեփական գործողությունների և քայլերի մեջ և ստեղծված հարաբերությունները փոխելու փոխադարձ պատրաստակամություն են հայտնում: [1, էջ 22-26]

1.2 Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման առանձնահատկությունները և հարաբերությունների պահպանման հետագա դինամիկան

Մեծ նշանակություն ունի ամուսնաընտանեկան հարաբերություններում առաջացող կոնֆլիկտի ընտրվող ելքերն ու հաղթահարման ուղիները: Կոնֆլիկտները կարող են դրսևորվել բուռն կերպով, քանի որ զույգերից յուրաքանչյուրը ցանկություն ունի հաստատել իր նոր դիրքը, արտոնությունների ու իրավունքների գերակշռող մասը վերագրել ինքն իրեն: Գրեթե յուրաքանչյուր կոնֆլիկտ հնարավոր է մեղմել և ինչ որ չափով շրջել, բայց լոկ զարգացման սկզբնական փուլերում: Ընտանիքներում ծագող

կոնֆլիկտները մեղմացնելով և արտամղվելով, կարող են պահպանման ուղի հանդիսանալ: Շատերը հանդուրժողականություն հանդես բերելով, շարունակում են ապրել բացահայտ կամ անբացահայտ կոնֆլիկտների պայմաններում՝ ելնելով տարբեր նկատառումներից ցանկանում են պահպանել ընտանիքը:[8, էջ 56,89]

Կոնֆլիկտների լուծումը մասնակիցների համար անձնական կարևորության խնդիրների փոխընդունելի լուծում գտնելու գործընթաց է: Լուծումը կարող է լինել ամբողջական կամ մասնակի: Ամբողջական լուծումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ վերանում են պատճառները, կոնֆլիկտի առարկան և կոնֆլիկտային իրավիճակները: Մասնակի լուծում էրբ կոնֆլիկտի կամ կոնֆլիկտային իրավիճակների ոչ բոլոր պատճառներն են վերացվում: Այս պարագայում մասնակի լուծումը կարող է դեպի ամբողջական լուծում տանող փուլ լինել [9, էջ 26-28]: Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները լուծելու ուղիներ գտնելու ցանկությունը կապված է ոչ միայն այն նախապատվության հետ, որը շատերն ունեն իրենց միջև ծագող խնդիրների խաղաղ, առանց բախումների լուծման համար, որն արտահայտվում է հայտնի ասույթով «Վատ խաղաղությունն ավելի լավ է, քան լավ վիճաբանությունը»: Դա բավականին օբյեկտիվ հիմքեր ունի՝ մարդկային հարաբերությունների բուն իմաստով: Բանն այն է, որ այս հարաբերությունների հոգեդինամիկան մարդկանց դրդում է ոչ միայն կոնֆլիկտների: Ընդհակառակը, դրանց զարգացման մեջ կա հակառակ տենդենց, որն օգնում է կոնֆլիկտից անցում կատարել համագործակցության:

Եթե ամուսինները ճշտությամբ մոտենան այդ տենդենցին և ի վիճակի լինեն այն վերածել միմյանց հետ փոխգործակցության պրակտիկայի, ապա հնարավոր կլինի կոնֆլիկտը վերածել համագործակցության, իսկ բախումները՝ խաղաղության: Ավելին, կստեղծվի կոնֆլիկտից խուսափելու, այն կանխելու հնարավորություն [5, էջ 36]: Ամուսնական կոնֆլիկտների լուծման տեխնոլոգիան բազմազան է, այն իր մեջ ներառում է մի քանի փոխկապակցված գործողություններ, որոնք իրենց ամբողջությամբ կազմում են վարքի որոշակի ստանդարտ մոդելներ, որոնք թույլ են տալի խուսափել կոնֆլիկտներից և հմտորեն լուծել դրանք ծագելու դեպքում:[7, էջ 55-60]

Անկասկած, կոնֆլիկտի լուծման նախապայման ստեղծող առաջին գործողությունը կոնֆլիկտի իրական պատճառները պարզելու ունակությունն է: Պետք է հիշել, որ կոնֆլիկտի իրական պատճառը հաճախ թաքցվում է հակամարտող կողմերից մեկի կամ երկուսի կողմից: Կոնֆլիկտի իրական

պատճառը գտնելու խընդիրը հեշտ չէ: Այն պահանջում է լավ գիտելիքներ ամուսնու հոգեբանության վերաբերյալ: Եթե կոնֆլիկտի պատճառը ճիշտ էորոշված, ապակոնֆլիկտային իրավիճակն ավելի պարզ ու հասկանալի է դառնում, ուստի, այսպարագայում, ավելի հեշտե դառնում կոնֆլիկտի լուծման առավել ընդունելի ուղիները որոշել: Կոնֆլիկտների լուծումը ոչ մրցակցային, վերլուծական, խնդիրների լուծմանն ուղղված գործընթաց է, որը ենթադրում է կողմերի ուղղակի մասնակցությունը՝ արհեստավարժ մասնագետների օգնությամբ, և կենտրոնանում է ինչպես ինքնության, այնպես էլ կառուցվածքի վրա՝ դրանք դիտելով որպես կոնֆլիկտների վերլուծության և լուծման գործընթացի առանցքային հարցեր: Կոնֆլիկտի կարգավորումը կարող է տեղի ունենալ փոխզիջման, փոխգործակցության և արտաքին ազդեցության միջոցով: Ուսումնասիրենք կոնֆլիկտների կարգավորման փուլերը հետևյալ միջոցով.

Կոնֆլիկտի լուծում փոխզիջման միջոցով

1. Կոնֆլիկտի տեղափոխություն հուզական մակարդակից ինտելեկտուալ մակարդակ
2. Անհրաժեշտ է հավասարեցնել հակառակորդ կողմերի միջև դիրքերը
3. Վերացնել հակասությունը, այլ ոչ թե սահմանափակվել կողմերի հաշտեցմամբ
4. Փոխզիջումների մի քանի տարբերակների շարքի պատրաստում
5. Կոնֆլիկտի սուբյեկտների կամավոր հրաժարումը օբյեկտի մի մասից հօգուտ հակառակորդի՝ օբյեկտի մեկ այլ մասի տիրանալու

Կոնֆլիկտի լուծումը փոխգործակցության միջոցով

1. Կոնֆլիկտային իրավիճակների սուբյեկտների համար սեփական շահերը շատ կարևոր են, և փոխզիջումն անընդունելի է նրանց համար
2. Կոնֆլիկտի տեղափոխություն հուզական մակարդակից ինտելեկտուալ մակարդակ
3. Անհրաժեշտ է հավասարացնել հակառակորդ կողմերի միջև կիրքերը
4. Վերացնել հակասությունը, այլ ոչ թե սահմանափակել կողմերի հաշտեցմամբ
5. Կոնֆլիկտի սուբյեկտների բարյացակամ վերաբերմունք միմյանց նկատմամբ, փոխադարձ հարգանք և լսելու պատրաստակամություն
6. «Երկարաժամկետ համաձայնության» կնքում

Կոնֆլիկտի լուծում արտաքին ազդեցության միջոցով

- 1.Վերացնել կոնֆլիկտի օբյեկտը
- 2.Վերացնել կոնֆլիկտի սուբյեկտների միջև շփման հնարավորությունը
- 3.Փոխարինել կոնֆլիկտի օբյեկտը
- 4.Կոնֆլիկտի կարգավորման գործընթացում ներգրավել միջնորդների [7, էջ58-61]

Ամուսնական հարաբերությունների համար բազմաթիվ մեթոդներ են մշակվել՝Վ.Վլադիմիր, Դ.Կապուստինի, Ի.Դորնոյի, Ա.Էգիդեսի, Վ.Լևկովիչի, Յու.Ռյուրիկովի կողմից:

Ամուսնական կոնֆլիկտների լուծման կառուցողականությունը, առավելի քանմնացած հարցերինը, առաջին հերթին կախված է ամուսինների՝ հասկանալու, ներելու և զիջելու ունակությունից [6,էջ 66-68]:

Հաղթանակին չհասնելը սիրող ամուսինների կոնֆլիկտ վերացնելու միջոցներցմեկն է: Սիրելիի պարտության պատճառով ստացած հաղթանակը դժվար է նվաճում անվանել: Կարևոր է հարգել մյուսին անկախ նրանից, թե որքան է նրամեղքի չափաբաժինը: Պետք է կարողանալ անկեղծորեն ինքդ քեզ հարցնել(և որամենակարևորն է՝ անկեղծորեն ինքդ քեզ պատասխանել), թե իրականում ինչն էքեզ անհանգստացնում: Սեփական դիրքորոշման փաստարկները բերելիս պետք էանտեղի մաքսիմալիզմ և կատեգորիկություն չցուցադրել: Ավելի լավ է ինքնուրույնհասնել փոխըմբռնման և ուրիշներին՝ ծնողներին, ընկերներին, հարևաններին ևծանոթներին չդարձնել մասնակից սեփական հակամարտություններում: Միայն երկու ամուսիններից է կախված ընտանիքի բարեկեցությունը:

Հոգեբանական խորհրդատվությունըամուսնաընտանեկան կոնֆլիկտների լուծմանուղիներից մեկ է: Կոնֆլիկտային ընտանիքների հոգեբանական խորհրդատվությունն,ըստ էության, ամուսինների կյանքը բարդացնող և բախումներ առաջացնողբացասական հոգեբանական գործոնները փոխելու վերաբերյալ առաարկությունների մշակումն է:

ԳԼՈՒԽ 2. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները և հաղթահարման ուղիները թեմայի հետազոտական վերլուծություն

2. 1 Հետազոտության մեթոդը , կազմակերպումը և նկարագրությունը

Հիմնախնդրի հետազոտությունը իրականացվել է երեք փուլով:

1.Տեսական ուսումնասիրությունների և գրականության վերլուծության փուլ, որի ժամանակ ընտրվել են հետազոտության վարկածը, նպատակը, ինդիկատորները, մեթոդները, օբյեկտը, առարկան և ընտրված ընտանիքները:

2.Փորձարարական հետազոտության և համապատասխան վերլուծության փուլ:

3.Ընդհանրացման և ստացված վերլուծության փուլ, որի ժամանակ կատարվել են հիմնավորված և համապատասխան եզրակացություններ, ինչպես նաև որոշվել հիմնախնդրի արագ հաղթահարման ճանապարհները: Կ.Թումասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա»[2, էջ 211-213]

Հետազոտությունը անցկացվել է 2022 թ-ի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ք.Արտաշատում: Հետազոտությանը մասնակցել են այն ընտանիքները, որոնց մասին նախնական տեղեկատվություն է եղել որպես կոնֆլիկտային:

Հետազոտության մասնակիցների միջին տարիքը եղել է 27-40 տարեկան 10 իգական և 10 արական սեռի ներկայացուցիչներ:

Կ.Թումասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդիկայի ընտրությունը մեր հետազոտության համար պատահական բնույթ չէր կրում, քանի որ այն հնարավորություն է ընձեռնում վերլուծել բախումնային իրավիճակների, լարված, կոնֆլիկտային փոխհարաբերությունների, ճգնաժամերի հաղթահարման տարբերակներ, որոնք առավել տարածված և կիրառելի բնույթ են կրում մերօրյա ընտանիքներում: Մեթոդիկայի կիրառման ընթացքում մեր առջև նպատակ էինք դրել համակարգելու ընտանիքում զույգերի վարքի համապատասխան ձևերի դրսևորման առանձնահատկություններն ու մեխանիզմները կոնֆլիկտային

իրավիճակներում: Մեզ առանձնապես հետաքրքրում էր այն, թեկանանց և տղամարդկանց միջև կոնֆլիկտների առաջացման և սրման ընթացքում վարքի ինչ նոր մեխանիզմներ են առաջանում, ինչպես են նրանք փորձում հաղթահարել ստեղծված, թվում է՝ անելանելի իրավիճակը:

Ըստ այս մեթոդիկայի վերլուծության տղամարդիկ գտել են, որ հարմարումն այն ուղին է կամ միջոցը, որի օգնությամբ իրենց (կնոջ և ամուսնու) կոնֆլիկտային փոխհարաբերությունները չեն ազդի ընտանիքի մյուս անդամների վրա: Կանանցից 7-ի մոտ միջին միավորներ են արձանագրվել հարմարում սանդղակում (բացատրությունը ըստ վերոնշյալ պարբերության, 7 մավոր): Միջին ցուցանիշները վկայում են, որ կանանց ավելի քիչ է մտահոգել ընտանիքի մյուս անդամների վրա կոնֆլիկտների ունեցած ազդեցությունը: Տղամարդկանցից 8-ի մոտ միջին միավորներ են արձանագրվել փոխզիջումնային տարբերակում, քանի որ նրանք իրենց դեռևս «պատրաստ» չեն համարում լիովին ընդունելու զիջման բոլոր տարբերակները՝ գտնելով, որ դրանով կորցնում են լիդերության, տան ղեկավարի որակները (8 միավոր): Միջինից ցածր միավոր 3 կին արձանագրել է փախուստ տարբերակում, որը բնորոշ է հայ կանանց (6 միավոր): Կանանց կարծիքով, խուսափելով տհաճություններից, վեճերից, կարելի է «խաղաղ» պահել ընտանիքի մթնոլորտը: Ենթադրում ենք, որ կանայք այս կերպ ցանկանում են պարզապես հետաձգել վիճելի հարցի լուծումը կամ, որ ավելի հավանական է, վիճելի հարցի պատասխանատվությունը դնում են դիմացինի ուսերին: Միջինից ցածր միավոր 3 տղամարդ գրանցել է մրցակցություն ոճի կիրառման շրջանակներում (5 միավոր): Կանանց համեմատ տղամարդիկ այս ոճին հաճախ են դիմում՝ գտնելով, որ սեփական կարծիքներն ու համոզմունքները միանշանակ ճշմարտացի են: Այս դեպքում, սակայն, տղամարդիկ իհարկե պահպանում են առավելության զգացումը, սակայն կարողանում են իրենց մեջ ուժ գտնել և, եթե ոչ ընդունել, ապա լսել կանանց տեսակետը: Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը, փաստենք, որ ընտանիքներում չարձանագրվեց լիակատար ներդաշնակություն, սակայն կոնֆլիկտայնության միջին և միջինից ցածր մակարդակը նրանց հնարավորություն էր ընձեռել լսել միմյանց, ընդունել մեկ որոշում անգամ այն

դեպքերում, երբ կողմերից մեկը համաձայն չէ՝Նման վարքագիծ որդեգրելով՝ հետազոտվող վերոգրյալ զույգերը կարողացել էին պահպանել ընտանիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական և Էնպիրիկ հետազոտությունների համակազմը, ստացված արդյունքները և մասնագիտական գրականության ուսումնասիրությունները թույլ տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1.Կոնֆլիկտը երկու կամ ավելի անձանց փոխադարձ բացասական հոգեկան վիճակ է, որը բնութագրվում է թշնամանքով, խորթացմամբ, հարաբերություններիմեջ նեգատիվիզմով՝ պայմանավորված անձանց տեսակետների, հետաքրքրությունների կամ կարիքների անհամատեղելիությամբ:

2.Ասում են՝ «տան հիմքը չորս անկյուններն են, իսկ ընտանիքինը՝ երկու գլուխները»: Ընտանեկան օջախի չորս անկյունները փոխադարձ սերը, փոխադարձ հավատարմությունը, փոխադարձ հարգանքը և փոխօգնությունն են: Որպես ընտանեկան օջախի ստեղծողներ և պահապաններ, ամուսինն ու կինը հավասարապես պատասխանատու են դրա ճակատագրի, ամուսնության ամրության և երկարակեցության համար, նրանք հավասարապես որոշում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտը և ամուսնական հարաբերությունների ներդաշնակությունը:

3.Ցանկացած ընտանիք հիմնվում է փոխադարձ սպասումների և ակնկալիքների արդարացման կամ հնարավոր արդարացման վրա և, ցանկացած ապարդարացում կարող է բերել լարվածության, տաճնապայնության առաջացման, որի ընթացքում զույգերից յուրաքանչյուրը դրսևորում է յուրովի վարքագիծ, փորձում է յուրովի հարթել ստեղծված իրավիճակը:

4.Ընտանիքներում զույգերը փորձելով պահպանել իրենց ընտանիքը և ենթարկվելով այսպես կոչված բարոյական նորմերին և հասարակական պահանջմունքներին, հիմնականում ընտրում են զիջելու փոխհարաբերային ոճը, որը ոչ միշտ է դրական ընդունվում հենց իրենց կողմից և բավարարում նրանցինքնազնահատականի պահանջները:

Չետազոտություններից պարզվեց, որ կոնֆլիկտների պատճառ կարող է հանդիսանալ միմյանց հանդեպ ունեցած պահանջմունքների, սպասումների

անբավարարվածությունը, հիասթափությունը, կրթության մակարդակը, հայացքների տարբերությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Алешина Ю. Е. Цикл развития семьи: исследование и проблемы // Вестник МГУ- сер. 14 - Психология 1987г.-N 2-60-72с.
2. Богданович Л. А. Мы остаемся вместе Москва 1977г.
3. Волкова А. Н., Трелезникова Т. М. Методические приемы диагностики супружеских отношений // Вопросы психологии- Москва, 1985г.-N5-110-116с.
4. Гришина Н. В. Психология конфликта СПб 2000г.
5. Громова О. Н. Конфликтология курс лекции Москва 2001г.
6. Дмитриев А. В. Конфликтология 2010г. Учебное пособие
7. Еникеева Д. Н. Несчастливый брак Москва 1998г.
8. Зацепин В. И. Брак и семья // Психология семьи / Под ред. Д. Я. Райгородского-Самара 2009г.
9. Олифиревич Н. И., Зинкевич Куземкино Т. А., Велента Г.Ф. Психология семейных кризисов СПб: Реч. 2008г